ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19092024-06-0064 վկայականը և «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված 2024 թվականի մարտի 7-ի անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Կաթնաջուր 6-րդ փողոց 16 պահեստ» հասցեում գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 06-052-0049-0006 կադաստրային ծածկագրով 0,66442 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և դրա վրա կառուցված 06-052-0049-0006-001 կադաստրային ծածկագրով 1006 քառակուսի մետր մակերեսով պահեստը որպես պահեստ օգտագործելու, իսկ 06-052-0049-0006-002 կադաստրային ծածկագրով 326,3 քառակուսի մետր մակերեսով անավարտ պահեստը որպես պահեստ կառուցապատելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Անշարժ գույքի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 12 240 000 ՀՀ դրամ:

3. Աճուրդում հաղթող ճանաչված անձից հետ գանձել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և անշարժ գույքի գնահատման հետ կապված ծախսերը: